

ԻՆՉ Է ԵՂԱԾ ԽՈՐԵՆԱՑԻՒՆ ԲԱԺԻՆԸ
ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՄԻՀՐԴԱՏ ԹԻՐԵԱՔՅԱՆ (նյու-Յորք)

Գրութեանս նպատակն է ժխտել բացարձակապէս վաստակավոր պատմագետ բարեկամիս՝
Հրանտ Ք. Արմենի կտրուկ ու միանգամայն զարդարուն հայտարարութիւնը, թե «թագուհի
թարգմանութեան» կոչված Աստվածաշունչի հայերեն թարգմանութեան շքեղ պատմուհանին
ոսկեթել բանված զարդարանքը կպարտի քերթողահայր Մովսէս Խորենացիին: Մեր հին ու նոր
հմուտ բանասերներուն միտքին շանցած հայտնութիւն մըն է ահա, որ հրապարակ կնետվի:
Գլուտ մը հիրավի:

Արմենին հողվածը հրատարակված էր Երևան շուրջ տեսնող «Պատմա-բանասիրական հան-
դեսի» 1969-ի թիվ 1-ին մեջ, զոր աչքի առջև ունիմ: Վերի հավաստումը եղած է հախուռն կեր-
պով, առանց դրական և անհերքելի փաստերու: Հարգելի հողվածագրին եզրակացութիւնը ենթա-
դրութիւն մըն է պարզապէս, քանի որ մեր պատմութեան մեջ չենք գտներ անվիճելի տվյալներ,
որոնք հաստատեն Խորենացիին ունեցած բաժինը, մեծ կամ փոքր, Աստվածաշունչի (Հին և Նոր
Կտակարաններու) թարգմանութեան մեջ: Մյուս կողման, գուցե իրավունք ալ չունինք կասկա-
ծելու, թե Մեծն Սահակի, Մեսրոպի, Ելնիկի և այլ թարգմանիչներու կարգին այդ հրաշալի
թարգմանութիւնը կպարտի նաև գեթ մասամբ, — անկարելի է ստույգ բաժինը ճշտել, — Մովսէս
Խորենացիի բարձրորեն մշակված միտքին և հելլենական կրթութեան: Մեր հին մատենագրութեան
մեջ տեղ մը, սակայն, չէ հիշված Խորենացիին մասնակցութիւնը Ս. Գրոց թարգմանական աշ-
խատանքին: Պատմահայրը ինքն է որ «Շալոց պատմութեան» վերջավորութեան մոտերը կակնար-
կի իր թարգմանութեան, առանց սակայն հայտնելու, թե ինչ էին անոնք: Բայց այսքանը կբավ
Արմենին համար՝ վստահորեն հայտարարելու, թե պատմահոր թարգմանած գործերն մեկն ալ
Աստվածաշունչն էր: Իր իսկ բառերով՝ «Ինչ թարգմանութեան մասին կխոսի՝ չի հայտնել: Բայց
տարակույս չկա, թե տարիներ առաջ լրացուցած էր Աստվածաշունչի թարգմանութիւնը, նախա-
պէս ասորերեն թարգմանված թերիները ուղղելով կամ վերստին մշակելով, իսկ կարգ մը գրքեր
ալ բոլորովին նոր թարգմանելով»: Ուստի հեցած իր այսպիսի անսայթաք տրամաբանութեան»
անխուսափելի եզրակացութեան կհանգի մեր բարեկամը, թե Խորենացին է թարգմանիչը հրաշա-
կերտ հայ Աստվածաշունչին: Ալ դուք ո՛ր կմնաք հելլեն դպրութեան տիրաճած երանելի Սահակ
կաթողիկոս, բազմահմուտ Մեսրոպ Մաշտոց, անմասն վարպետ Եզնիկ, Հովհան Եկեղեցացիդ,
Հովսէփ Պաղեսացիդ և ընկերներդ: Ձեր կատարած գործը ի՞նչ արժեք ունի՞ր՝ նկատելով, որ ձեր
թարգմանական գիրքերը լի էին թերութիւններով և սրբագրելի մասերով և Խորենացին այդ բո-
լորը ուղղեց և սքանչելի նոր կամ նորոգված թարգմանութիւն մը տվավ մեր ձեռքը, թե՛ Հին և
թե՛ Նոր Կտակարաններու: Ահա Հրանտ Արմենի բերկրալի հայտնութիւնը: Խորենացիին գատ
Էրկու ավելի մոտ աղբյուրներ ունինք թարգմանիչներուն՝ Կորյուն և Ղազար Փարպեցի: Տեսնենք
թե այս երկու հեղինակները ինչ կպատմեն այդ շրջանի թարգմանչական աշխատութեան և
թարգմանիչներուն մասին: Կորյուն կտեղեկացնէ, թե. «Մաշտոց մանկական հասակին կրթված
էր հելլենական դպրութեամբ: Դրանից հետո երկու երանելիներն էլ ուղարկուին դարձրին, որ
իրենց ազգի դպրութիւնն ավելի զարգացնեն և հեշտացնեն: Մեծ Իսահակն սկսեց թարգմանել և
գրել իր առաջվա սովորութեամբ:

Պատահեց դարձյալ, որ նրանք իրենց աշակերտներինց երկու եղբայրների (սկրոնավոր ի-
մաստով, Աբելյան)՝ Հովսէփին, և երկրորդը՝ Եզնիկ անունով, Այրարատյան գավառից, Կողբ
գյուղից, ուղարկեցին Ասորոց կողմերը, Եզնիկ քաղաքը, որպէսզի նրանց սուրբ հայրերի ավան-
դութիւնները ասորերեն լեզվից հայերենի դարձնեն ու գրեն: Իսկ թարգմանիչները հասան այն-
տեղ, ուր ուղարկվեցին և նրանց պատվերը կատարեցին և ուղարկեցին պատվական հայրերին,
անցան գնացին հունական կողմերը, ուր և ուսանելով և հմտանալով կարգվեցին հելլենական
լիզվի թարգմանիչներ:

Ապա մեջտեղում մի ժամանակ անցնելուց հետո պատահեց, որ մեր Հայաստան աշխարհից
դիմացին, իջան հունական կողմերը մի քանի եղբայրներ, որոնց առաջինի անունը Ղևոնդես էր,

և երկրորդը ես կորյունս, և Կոստանդինական քաղաքում մոտեցան, հարեցին Եզնիկին, իբրև ընտանեզոյն սննդակցի, և այնտեղ միասին կատարեցին հոգևոր պիտույքի խնդիրը («այսինքն՝ թարգմանության գործը», Արեղյան)։ Հետո նրանք աստվածատուր գրքերի («Աստվածաշունչի» Արեղյան) հաստատուն օրինակներով և շատ շնորհագիր հայրերի հետագա ավանդություններով և նիկիական ու Եփեսոսական կանոններով եկան, երևացին Հայոց աշխարհում և հայրերի առաջ դրեցին սուրբ եկեղեցու Կտակարանները, որ բերել էին իրենք։

Իսկ երանելի Մահակն առաջ հունարեն լեզվից հայերեն կր դարձրել և կեղեցական գրքերի ամբողջությունը և շատ սուրբ հայրապետների իմաստություն։ Դրանից հետո դարձյալ նա Եզնիկի հետ միասին սկսեց առաջվա հանկարծազուտ շտապովի թարգմանությունները հաստատել բերված ստույգ օրինակներով։

...Ապա դրանից հետո դարձյալ երանելի Մաշտոցն իր այնպիսի շատ ու բարձրագույն ուսումով սկսեց կարգել և հորինել հաճախագույն, դյուրապատում, շնորհագիր, բազմադիմի ճառեր մարգարեական գրքերի լուսավորությունից ու հյուսթից։

Դառնանք հիմա Ղազար Փարպեցիին։ Ահավասիկ իր խոսքերը. «Եվ այսպես նշանագիրներու գլուտը հաջողելով՝ երանելի Մաշտոցը ձեռք դարկավ գործի, կարգավորությամբ Սահակ սուրբ Հայրապետին Հայոց...։ Վասնզի ձեռնհաս չէին ուղղակի անսխալ ի գլուխ հանելու առանց առաջնորդության սուրբ Հայրապետ Սահակի որ ուսմամբ հույժ լեցուն՝ բազում հույն գիտուններն կանցներ. կատարելապես հմուտ ըլլալով երգողական տառերուն և հոստորական ճոխարան մեկնաբանության։

...Եվ երանելին Մաշտոց և իրեն հետ բոլոր պատվական քահանաները չէին համարձակեր այսպիսի ահապին և կարևոր գործի ձեռք դարնել, թարգմանել Աստվածաշունչ մատյանները հույն լեզվեն հայերենի, քանզի խորապես տեղյակ չէին հունարենի գիտություն։ Ապա Հայոց աշխարհի բոլոր ավագ քահանաները երանելի Մաշտոցին հետ միասին և համայն նախարարներով հավաքվեցան Հայոց թագավոր Վուսնայուհի քով և թագավորին հետ մեկտեղ սկսան աղաչել սուրբ Կաթողիկոս Սահակին, որ ստանձնե հոգևոր աշխատությունը թարգմանելու Աստվածաշունչ Կտակարանները հույն լեզվեն հայ բարբառի։

...Եվ այս ամենը լսելով Հայոց բարեպաշտ Կաթողիկոսը սուրբն Սահակ... կամավոր հոժարությամբ լծվեցավ գործի, վստահանալով Աստուծո գործակցության, այն որ տվավ իրեն գիտություն այնպիսի առավելագույն շնորհ, և անվեհեր ջանալով գիշեր և ցերեկ թարգմանեց ամբողջ Կտակարանները...»։

Այս բոլորն կարծեմ հստակ կտեսնվի, որ Աստվածաշունչի թարգմանությունը թե՛ ասորերեն և թե՛ հունարեն լեզուներն՝ կրկին ու կրկին սրբագրություններով ամբողջապես կատարված էր Մեծն Սահակի և Մաշտոցի կենդանություն։ Շնորհիվ այդ հանձարեղ միտքերու՝ հայ լեզուն և գրականությունը, քանի մը տասնյակ տարիներու միջոցին, հարստացած էին գլուխ-գործոց, հոյակապ թարգմանական մատյանով մը, որուն շնն կրցած հավասարիլ օտար գրականությունները։ Զգացումներն տարվելու տեղի չկա, իրերը պետք է տեսնել և դատել մեր ձեռքը եղած տվյալներով, անշուշտ կարելիության սահմանին մեջ։ Սահակ Պարթև, բազմերախտ Մաշտոց, բերթողահայր Խորենացին, և հույլը կարող թարգմանիչներուն հավասարապես սիրելի են մեզ, սակայն զգուշանանք մեկուն իրավունքը մյուսին տալն. այդպես ընելը արդարության գործ չէ։

Հրանտ Արմեն կառչելով Խորենացիի դրածին՝ կեզրակացնե, թե Սահակ և Մեսրոպ թերի կերպով թարգմանած էին Աստվածաշունչը, իբր հետևանք մեր արվեստին («գրագիտական բարձր հմտություն», ըստ հոգվածագրին) տեղյակ չըլլալուն։ Այս է եղեր պատճառը, ինչպես կենրկայացնե բերթողահայրը, որ «մեծն Սահակ և Մեսրոպ մեզ առան ուղարկեցին Աղեքսանդրիա, պանծալի լեզուն սովորելու, իսկական ճեմարանում կատարելագործվելու»։ Ուրիշ խոսքով, բազում տարիներու տրնաջան աշխատանքն էր Սահակ և Մեսրոպ հուսկ ուրեմն տեսեր են, որ մեզն շնն կրցած ելլել, և խեղճուկ թարգմանություն մը ձեռքերնին մնացած է, որով գաղափարը ոնեցեր են կրիտասարդ Մովսեսը քանի մը ընկերներով ուղարկել Աղեքսանդրիա, տիրանալու հելլենական ուսման, մեկ որոշապես չէ ըսված, թե հմտանալով հունարենին՝ Խորենացին հայրենիք դարձին իր գիտությունը ի գործ դնե թարգմանված Աստվածաշունչի սրբագրման կամ Կտակարաններու վերստին թարգմանություն։ Թե որ իրապես այդ հսկա գործը կատարած է մեր հանձարեղ Պատմահայրը հաջորդ կրկար տարիներուն, ինչո՞ւ չէ հայտնեք այդ պանծալի իրողությունը։ Տվյալներու պակասը, սակայն, արգելք մը չէ, որ Հրանտ Արմեն ընդունի առանց տարակուսելու, թե մեր թագուհին, իմա Աստվածաշունչը, յուր շքեղ պատմուճանին ոսկեթել բանված զարդարանքը կպարտի բերթողահայր Մովսես Խորենացիին։

«Amicus Plato, sed magis amica veritas».